Արձանագրություն N 3

ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/12 ծածկագրով մեդալների, կրծքանշանների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

30 մայիսի 2018թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հ. Բաղինյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Տ. Ղուկասյան / գնահատող /
	Շ. Իսախանյան /գնահատող/
	Ս. Զաքոյան / բացող /
	Գ. Խաչատրյան / բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն. Հարությունյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Հ.Բաղինյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) բոլոր չափաբաժիններում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում (29.05.2018թ.) ստացվել է տեղեկատվություն համաձայն որի՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ:

- ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/12 ծածկագրով գնման ընթացակարգի բոլոր չափաբաժիններում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 <<ԳՆՈՄՈՆ>> ԲԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում (29.05.2018թ.) ներկայացվել են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի համաձայն:

1.2 Հաշվի առնելով, որ պահանջվող տեղեկատվությունը և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը ստացվել են ժամկետից շուտ՝ գնահատող հանձնաժողովը որոշում է սույն ընթացակարգի N 2 արձանագրության 4.1 կետում նշված <<հունիսի 1-ին ժամը 11:30-ին>> բառերը փոխարինել <<մայիսի 30-ին ժամը 11:30-ին>> բառերով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Հ.Բաղինյան)

2.1 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց՝ հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի հայտի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 <<ԳՆՈՄՈՆ>> ԲԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Հ.Բաղինյան)

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, ինչպես նաև սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 <<ԳՆՈՄՈՆ>> ԲԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ.Բաղինյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Բաղինյան

Անդամ՝ ---------- Տ. Ղուկասյան

---------- Շ. Իսախանյան

---------- Ս. Զաքոյան

---------- Գ. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան